ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻՐՋԱՆՅԱՆ

Սովետական իշխանության առաջին իսկ տարիներից կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը լայն հնարավորություններ ստեղծեցին գիտության զարգացման համար։ Գիտությունը դարձավ պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը։

Սովետական գիտության կազմակերպական սկզբունքների մշակման գործում հսկայական է կոմունիստական կուսակցության և սովետական պետության հմնադիր ու ղեկավար Վ. Ի. Լենինի դերը։ Քաղաքացիական պատերազմի դժվարին օրերին՝ 1918 թ. ապրիլին, Վ. Ի. Լենինը գրեց «Գիտատեխնիկական աշխատանքների պլանի ուրվագիրը», որը դարձավ երիտասարդ սովետական հանրապետության գիտությունների ակադեմիայի և այլ գիտահետազոտական հիմնարկների հետագա գործունեության հոյակապ ծրագիր։ Այս և հետագա շրջանում գրած իր մի շարք աշխատություններում Վ. Ի. Լենինը բազմակողմանիորեն հիմնավորեց, որ սոցիալիստական շինարարության տարիներին սովետական պետությունն ու նրա ղեկավար ուժը հանդիսացող կոմունիստական կուսակցությունն են կանխորոշում գիտության զարգացման, նրա կուսակցական-պետական ղեկավարման հիմնական միտումները։ Սոցիալիզմը, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, «...կազատի գիտությունը նրա բուրժուական կապանքներից, կապիտալին ստրկանալուց, կեղտոտ կապիտալիստական շահասիրությանը ստրկանալուց»[1]։ Միայն սոցիալիզմի պայմաններում հնարավոր դարձավ մարդկային միտքն ու հանճարը ծառայեցնել ժողովրդին։ Կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը, կենսագործելով գիտության կազմակերպման լենինյան սկզբունքները, սովետների երկիրը դարձրին գիտատեխնիկական մեծ պոտենցիալ ունեցող հզոր տերություն։

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում ոչ մի գիտահետազոտական հիմնարկ կամ բարձրագույն ուսումնական հաստատություն չկար։ Ցարիզմի օրոք ազգային փոքրամասնությունները զրկված էին կրթության հնարավորությունից։ Անցյալում բարձր զարգացած մշակույթ ունեցող հայ ժողովրդի շատ տաղանդավոր ներկայացուցիչներ ստիպված էին իրենց ուժերն ու գիտելիքները ներդնել Հայաստանի սահմաններից դուրս՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Թբիլիսիում, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի մի շարք գիտական կենտրոններում։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո Հայաստանի կոմկուսի և կառավարության անդուլ ջանքերի և մշտական հո-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 511։

դատարության շնորհիվ միայն հնարավոր դարձավ հայ ժողովրդի վիթխարի մշակութային ժառանգությունն ի սպաս դնել սոցիալիստական շինարարությանը։ Ա. Մյասնիկյանը 1921 թ. նոյեմբերի 29-ին գրել է. «Աշխատավորության կրթություն, գրականություն, արվեստ և գիտություն,— այս ամենը մեռած դրության մեջ էր բուրժուական Հայաստանի օրով։ Նայեցե՛ք Սովետական Հայաստանին և կտեսնեք, որ պատկերը, ճիշտ է՝ դանդաղ քայլերով, բայց փոխվում է դեպի լավը։ Հասարակական ու մտավոր-կուլտուրական կյանքը սկսում է բեղմնավորվել»[2]։

1920-ական թվականների սկզբներին Հայաստանի կառավարության հրավերով և սեփական ցանկությամբ մշտական աշխատանքի համար Հայաստան տեղափոխվեցին գիտատեխնիկական մտավորականության մի շարք նշանավոր գործիչներ՝ լեզվաբան Հ. Աճառյանը, պատմաբան Հ. Մանանդյանը, քիմիկոս Ս. Ղամբարյանը, երկրաբան Հ. Կարապետյանը, հիդրոշինարար Հ. Տեր-Աստվածատրյանը, ճարտարապետ Ա. Թամանյանը, բժիշկ Լ. Հովհաննիսյանը և շատ ուրիշներ, որոնք իրենց գիտելիքներն ու եռանդը նվիրաբերեցին մայր հայրենիքի ծաղկմանն ու բարգավաճմանը։

Սովետական Հայաստանում գիտական մտքի և գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման դարբնոցը դարձավ Երևանի պետական համալսարանը։ ՀՍՍՀ լուսժողկոմ Աշ. Հովհաննիսյանը 1921 թ. հունվարի 23-ին համալսարանի պաշտոնական բացման արարողության ժամանակ ունեցած իր ելույթում, վերլուծելով բարձրագույն կրթության և գիտության դերը, ասաց. «Գիտությունը պետք է հանդիսանա կյանքի և աշխատանքի կազմակերպիչ գործոններից մեկը և այսուհետև նա պետք է գտնվի բանվորության ձեռքում և տոգորվի նրա շահերով ու իդեալներով...։ Ժողովրդական համալսարանը պետք է հանդիսանա մտքի գիտական աշխատանոց բանվորության և գյուղացիության համար...»[3]։

1920-ական թվականներին համալսարանում գիտահետազոտական լուրջ աշխատանքներ էին կատարվում ինչպես հասարակական, այնպես էլ բնական գիտությունների բնագավառում։ Այդ տարիներին համալսարանի բազմաթիվ ամբիոններում, կաբինետներում, լաբորատորիաներում ու թանգարաններում բազմաբեղուն գիտամանկավարժական գործունեություն էին ծավալել պատմաբաններ Հ. Մանանդյանը և Լեոն (Ա. Բաբախանյան), լեզվաբաններ Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, գրականագետ-լեզվաբան Մ. Աբեղյանը, գրականագետ Ա. Տերտերյանը, տնտեսագետ-պատմաբան Թ. Ավդալբեգյանը, ազգագրագետ Ս. Լիսիցյանը, հնագետ Ա. Քալանթարը, միկրոբիոլոգ Պ. Քալանթարյանը, սերմնաբույժ Մ. Թումանյանը, մաթեմատիկոս Հ. Նավակատիկյանը, ֆիզիկոս Հ. Անժուրը, քիմիկոսներ Հ. Հովհաննիսյանը, Լ. Ռոտինյանը և Ս. Ղամբարյանը, բժշկագետներ Հ. Քեչեկը, Վ. Արծրունին, Ա. Մելիք-Ադամյանը և ուրիշներ։ Նրանք մեծ աշխատանք կատարեցին Հայաստանում բարձրագույն կրթությունը զարգացնելու, նրա գիտատեխնիկական բազան ընդարձակելու, նոր մասնագետներ պատրաստելու գործում։

---

[2] Ա. Ֆ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 377—378։

[3] Մեջբերումը տե՛ս Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը (1920—1930 թթ.), Երևան, 1965, էջ 27։

Կուսակցությունը հին գիտական մտավորականության վերադաստիարակման հետ միաժամանակ մեծ նշանակություն էր տալիս գիտական նոր կադրերի պատրաստմանը։ Ռ(բ)Կ XIII համագումարի որոշումներում ընդգծվում էր, որ «առաջվա պես շատ սուր է բուհերը մարքսիստական գիտադաստավորական ուժերով ապահովելու հարցը։ Մասնագիտական բուհերի մեծամասնության նույնիսկ հասարակական գիտությունների ամբիոնները զբաղեցվում են հին բուրժուական պրոֆեսորների կողմից։ Անհրաժեշտ է բոլոր ջանքերը գործադրել ամենաարագ կերպով ստեղծելու կոմունիստ պրոֆեսորների կադր...»[4]։

Հայաստանի կոմկուսն ու կառավարությունը, ելնելով կուսակցության ցուցումներից, համալսարան դասախոսական աշխատանքի ուղարկեցին կոմունիստներ Հ. Հովհաննիսյանին, Հ. Գյուլիքևխյանին, Պ. Քալանթարյանին, Հ. Ազատյանին, Լ. Վարդապետյանին, Ժ. Միրզախանյանին, Հ. Ինճիկյանին, Ս. Աբովյանին, Տ. Մուշեղյանին և ուրիշների[5]։ Մինչև 1920-ական թվականների կեսերը համալսարանի պրոֆեսորների, դասախոսների և գիտական աշխատակիցների կազմն ըստ կուսակցականության հետևյալ պատկերն ուներ[6].

ակադեմիական տարի	կոմկուսակցության անդամներ	անկուսակցականներ	ընդամենը
1921/22	3	29	32
1922/23	4	38	42
1923/24	7	62	69
1924/25	8	77	85
1925/26	12	92	104

1926 թ. մայիսին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը, լսելով լուսժողկոմ Ա. Մռավյանի զեկուցումը, որոշում ընդունեց համալսարանին կից հիմնել հատուկ գիտահետազոտական կուրսեր և ուժեղացնել կոմունիստ դասախոսների աշխատանքը[7]։ Պլենումը լուսժողկոմատի գաղափարական ղեկավարությունն ամրապնդելու նպատակով անհրաժեշտ համարեց կազմակերպել Պետական գիտական խորհուրդ[8]։

1925—1930 թթ. համալսարանը հրատարակեց «ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր» 6 համար, որտեղ տպագրվեցին 40-ից ավելի դասախոսների 52 գիտական աշխատություններ, որոնցից 19-ը հասարակական, իսկ 33-ը՝ բնական գիտությունների գծով[9]։

---

4 «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», II մաս, Երևան, 1955, էջ 108։

5 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 4, գ. 308, թ. 208—209։

6 Հակոբ Հովհաննիսյան, ՀՍԽՀ պետական համալսարանը (1921—1926), («ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», 1927, № 2—3, էջ XXV), ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 4, գ. 284, թ. 21, «Материалы к отчету Центрального комитета КП/б/Армении. Март 1924—октябрь 1925 г.», Эривань, 1925, с. 93.

7 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 7, գ. 1, թ. 9։

8 Լուսժողկոմատի կոլեգիան 1927 թ. մայիսի 25-ի նիստում վերջնականապես կազմակերպեց Պետական գիտական խորհուրդ՝ գիտամանկավարժական, գիտատեխնիկական և գիտաքաղաքական սեկցիաներով («Խորհրդային Հայաստան», 28. V. 1927)։

9 Լ. Պ. Ղտրիրջանյան, նշվ. աշխ., էջ 184։

Հանրապետության երկրորդ բարձրագույն ուսումնական հաստատությունը 1923 թ. բացված ՀՍՍՀ պետական կոնսերվատորիան էր, որը ոչ միայն երաժշտական մշակույթի ուսումնական, այլև գիտահետազոտական կենտրոն էր։ Կոնսերվատորիան, ուր դասավանդում էին նշանավոր կոմպոզիտորներ Ա. Սպենդիարյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ռ. Մելիքյանը և Ս. Մելիքյանը, լուսժողկոմատի ցուցումով մեծ գործ կատարեց հատկապես հայկական ժողովրդական երգերի հավաքման և մշակման ասպարեզում։ 1928 թ. օգոստոսին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտպրոպ կոլեգիայի ընդունած «Պետկոնսերվատորիայի մասին» որոշմամբ հավանություն տրվեց «...լուսժողկոմատի ձեռնարկած միջոցներին՝ ժողովրդական երգերի հավաքման ասպարեզում»[10]։

Հայաստանի կոմկուսի և կառավարության ջանքերով 1920-ական թվականների սկզբներին լուսժողկոմատի կազմում ստեղծվեցին Սովետական Հայաստանի առաջին գիտական հիմնարկները։ Լուսժողկոմատի սիստեմում գործում էր գիտական և գեղարվեստական-ակադեմիական կենտրոն, որը ղեկավարում և վերահսկում էր գիտական ընկերությունների, գիտահետազոտական ինստիտուտների, գիտական գրադարանների, գիտական-գեղարվեստական աշխատանքների համար անհրաժեշտ փորձնական և ցուցադրական հիմնարկների, թանգարանների, պետական և շրջանային թատրոնների, հնության պահպանության կոմիտեի աշխատանքները[11]։

Հայաստանի հեղկոմի դեկրետով 1921 թ. փետրվարի 5-ին հիմնվեց էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը, որի նպատակն էր «...գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրայի ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնության այն բոլոր հիշատակարանները, որոնք գիտական ու գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են աղբյուր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործության»[12]։ 1921 թ. մայիսին այն վերանվանվեց Հայաստանի գիտական ինստիտուտ։ Դա առաջին գիտահետազոտական հիմնարկն էր Սովետական Հայաստանում։ Ինստիտուտի կոլեգիայի անդամներն էին Լ. Սարգսյանը (նախագահ), Ե. Տեր-Մինասյանը (գիտական-քարտուղար), Ս. Լիսիցյանը և Ս. Տեր-Հակոբյանը։ 1921 թ. կեսերից ինստիտուտի գիտական կոլեգիայի նախագահ և կոմիսար հաստատվեց Կ. Մելիք-Օհանջանյանը[13]։ Իր գոյության երկու տարիների ընթացքում ինստիտուտը մեծ գործ կատարեց Մատենադարանի ձեռագրական հավաքածուն հարստացնելու և հայագիտական մի շարք աշխատություններ, դասագրքեր ու ծրագրեր հրատարակելու ասպարեզում[14]։

---

10 «Խորհրդային Հայաստան», 30. VIII. 1928։

11 Այս հիմնարկների կատարած աշխատանքների մասին մանրամասն տե՛ս «Գիտություն և գիտական-հետազոտական աշխատանքը Խորհրդային Հայաստանում. 1920—1930», Երևան, 1931, էջ 88—134։

12 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պր. I, 1921, էջմիածին, էջ 107—108, «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր—1922 թ. հունվար)», Երևան, 1974, էջ 332—333։

13 К. С. Худавердян, Культурная революция в Советской Армении, 1920—1940, Ереван, 1966, с. 146.

14 Մանրամասն տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921—1922։

1925 թ. հունվարին Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ հիմնվեց ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը[15]։ Դեռևս 1924 թ. հոկտեմբերի 20-ին և դեկտեմբերի 22-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության նիստերում լսվել էին ինստիտուտի կազմակերպման և գիտական ուժերի համալրման հետ կապված հարցերը[16]։ Ինստիտուտի կանոնադրության մեջ ասված էր, որ այն «աշակցում է բնապատմական, մաթեմատիկական, տեխնիկական, պատմական, հասարակական և գեղարվեստական խնդիրների գիտական ուսումնասիրությանը Խորհրդային Հայաստանում և իր աշխատանքներով նպաստում է Հանրապետության նյութական և մտավոր-կուլտուրական շինարարությանը»[17]։ Գիտության և արվեստի ինստիտուտի գերագույն մարմինը նրա իսկական անդամների ընդհանուր ժողովն էր, իսկ կենտրոնական գործադիր մարմինը՝ ինստիտուտի խորհուրդը, որն ուներ իր նախագահությունը։ Ինստիտուտի երեք բաժիններում (բնապատմական-մաթեմատիկական, պատմական-հասարակագիտական և գեղարվեստական) ընդգրկված էին գիտության և մշակույթի անվանի գործիչներ Հ. Հովհաննիսյանը, Գ. Արեշյանը, Հ. Քեչեկը, Լ. Ռոտինյանը, Ա. Հակոբյանը, Պ. Քալանթարյանը, Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Լեոն, Աշ. Հովհաննիսյանը, Դ. Ղափանցյանը, Ա. Տերտերյանը, Մ. Աբեղյանը, Ա. Կարինյանը, Ա. Քալանթարը, Ա. Թամանյանը, Թ. Թորամանյանը, Մ. Սարյանը, Ա. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը, Դ. Դեմիրճյանը և ուրիշներ։

Ինստիտուտն իր գործունեության հինգ տարիների ընթացքում որոշակի դոր կատարեց հայագիտության զանազան պրոբլեմների մշակման, հանրապետության բնական հարստությունների ուսումնասիրության և տարբեր գիտական արշավախմբերի կազմակերպման ուղղությամբ։ Այն կապեր էր պահպանում ինչպես Հայաստանի, այնպես էլ եղբայրական սովետական հանրապետությունների և արտասահմանի գիտական ու գեղարվեստական հիմնարկությունների և ընկերությունների հետ։

Սովետահայ պատմագիտության սկզբնավորման տարիներին հիմք դրվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության գիտական մշակմանը։ Ելնելով ՀԿ(բ)Կ II համագումարի հրահանգներից, 1923 թ. մայիսի 20-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը որոշում ընդունեց ստեղծել Կենտկոմին կից կուսակցության պատմության բյուրո (Կուսպատ), հետևյալ կազմով. նախագահ՝ Աշ. Հովհաննիսյան, անդամներ՝ Ա. Մռավյան, Ե. Ջուբար, քարտուղար՝ Մ. Աղայան[18]։ Կուսպատն իր գործունեությունը սկսեց 1923 թ. հուլիսի 1-ից։ Սկզբնական շրջանում այն կապեր հաստատեց գավառային կուսակցական կոմիտեների հետ և մամուլի միջոցով պարզաբանեց իր դերն ու նշանակությունը։ Կուսպատը զգալի աշխատանք ծավալեց մարքսիզմ-լենինիզմի կլասիկների գիտական ժառանգությունը հայերեն թարգմանելու և Հայաստանի կոմկուսի պատմության առանձին հարցերի մշակման ասպարեզում։ 1920-ական թվականներին հրատարակվեցին Հայաստանի հեղափոխական շարժումների և բոլշևիկյան կազմակերպությունների պատմությանը

---

15 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 122, ց. 3, գ. 284, թ. 215։

16 Մլի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 4, գ. 2, թ. 29, 43։

17 «Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի», 1926, № 1, էջ 222։

18 «Պատմա-կուսակցական գիտության կենտրոնը Հայաստանում», Երևան, 1974, էջ 8—9։

նվիրված առաջին աշխատությունները, որոնց հեղինակներն էին նշանավոր կուսակցական ու պետական գործիչներ Ա. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը, Ա. Մռավյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության 1928 թ. ապրիլի 24-ի որոշմամբ Կուսպատը դարձավ Կենտկոմի բաժին՝ վարիչով և 2 գիտական աշխատողով[19]։

Կուլտուրական շինարարության տարիներին Հայաստանի կոմկուսի և կառավարության ջանքերի շնորհիվ առաջին պլանի վրա մղվեցին այն գիտությունները, որոնց ուսումնասիրության ոլորտն ընդգրկում էր ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի ճյուղեր, ինչպիսիք էին արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու առողջապահությունը։

ՀՍՍՀ հողժողկոմատի սիստեմում գտնվող գիտահետազոտական հիմնարկները լայն աշխատանք ծավալեցին բամբակագործության, ծխախոտագործության, շերամապահության, այգեգործության, ձկնաբուծության, անտառաբուծության, ագրոքիմիայի և այլ բնագավառների գծով։

1922 թ. հողժողկոմատի գյուղատնտեսական բաժնին կից ստեղծվեց գյուղատնտեսական-բակտերիոլոգիական, քիմիական և տեխնիկական-քիմիական միացյալ լաբորատորիա, որի նպատակն էր բույսերի, հողի, կաթի և այլ մանրէների ուսումնասիրությունը, օգտակար մանրէների կյանքի զարգացման և վնասակարների ոչնչացման միջոցների որոնումը, կուլտուրական բույսերի հիվանդությունների, գինու թափոնների ուտիլացման, հանքային ջրերի ուսումնասիրումը և այլն[20]։ Լաբորատորիայի աշխատանքները ղեկավարում էին անվանի գիտնականներ Պ. Քալանթարյանը, Բ. Գալստյանը, Ս. Ղամբարյանը, Լ. Ռոտինյանը։ 1920-ական թվականներին կատարված փորձերի և անալիզների տվյալներով հիմնավորվեց կալցիումի ցիանամիդ պարարտանյութի արտադրության և շաքարի ճակնդեղի մշակության նպատակահարմարությունը Լենինականի սարահարթում։ Շաքարի ճակնդեղի կուլտուրայի ընդհանուր և ագրոտեխնիկական պայմաններն ուսումնասիրելու համար հողժողկոմատը Լենինականում հիմնեց փորձնական սելեկցիոն կայան։ Կատարված աշխատանքներն ապացուցեցին, որ նոր անցկացված Շիրակի ջրանցքի ջրերով ոռոգվող Լենինականի սարահարթը շաքարի արդյունաբերություն ստեղծելու լավագույն շրջաններից է[21]։

Հատկապես ուշադրության արժանի է 1923 թ. գարնանը կազմակերպված Սևանի լճակայանի աշխատանքը։ Կայանը ձեռնամուխ եղավ Սևանա լճի ջրակենսաբանական համակողմանի ուսումնասիրությանը, որը հնարավորություն տվեց պնդելու, որ լիճը ձկնատնտեսականից բացի ունի բնապատմական նշանակություն։ Կայանն ուներ իր տպագիր օրգանը՝ «Սևանի կայանի տեղեկագիրը», որի շնորհիվ այն գիտական աշխատանքների փոխանակություն էր կատարում Սովետական Միության մոտ 200, իսկ արտասահմանի՝ մոտ 100 գիտական հաստատությունների հետ[22]։

---

19 Նույն տեղում, էջ 9։

20 «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», Երևան, 1925, էջ 41։

21 Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Աթանասյան, Շաքարի ճակնդեղի մշակության մոտակա հեռանկարները Հայաստանում («Գյուղատնտեսական կյանք», 1928, № 10—12, էջ 59—63)։

22 «Խորհրդային Հայաստան», 14. XII. 1929։

Հայաստանի կոմկուսը գյուղատնտեսության զարգացման և նրա սոցիալիստական վերակառուցման հիմնական խնդիրներից մեկը համարում էր գիտական-փորձնական գործի ըստ ամենայնի ընդլայնումը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 4-րդ (1929 թ. նոյեմբերի 18—20) պլենումի բանաձևում շեշտվում էր գիտական-փորձնական գործի հսկայական նշանակությունը թե՛ բերքատվության բարձրացման և թե առհասարակ գյուղատնտեսության զարգացման համար։ Պլենումն անհրաժեշտ համարեց «...գիտական-փորձնական գործի կազմակերպումը հիմնականում տանել սոցիալիստական հատվածի գծով, ունենալով հիմնական հենակետեր խորհրդային և կոլտնտեսություններում, շարունակելով միաժամանակ փորձնական գործի մի մասը կազմակերպել նաև գյուղական անհատական աշխատավորական տնտեսություններում։ Նկատի ունենալով մեր երկրի գիտական ուսումնասիրության բացակայությունը, առանձնահատուկ ուշադրություն դարձնել գիտական-ուսումնասիրական գործի կազմակերպման վրա և պարբերաբար հրատարակել կատարված և կատարվելիք ուսումնասիրությունների արդյունքները»[23]։

1920-ական թվականներին Հայաստանում գիտական-փորձնական բնույթ կրող հիմնարկներից աչքի էին ընկնում Էջմիածնի սելեկցիոն կայանը, այգեգործական փորձնական կայանը, բուսաբանական այգին։ 1925 թ. կազմակերպված Էջմիածնի սելեկցիոն կայանի աշխատանքները նպաստեցին բամբակի տեսակների փորձնական հողամասերի ընդլայնմանը։ Վերջիններիս կազմակերպմանը ֆինանսական օգնություն ցույց տվեցին գործադրական բուսաբանության համամիութենական ինստիտուտը և Գանձակի (Կիրովաբադ) փորձնական-սելեկցիոն կայանը[24]։

1926 և 1929 թթ. հողժողկոմատի հանձնարարությամբ պրոֆ. Ն. Տրոիցկին կատարեց Հայաստանի մարգագետինների և արոտավայրերի հետազոտությունը[26]։ Նշանավոր գիտնական-սերմնաբույծ Մ. Թումանյանը, առաջինը Սովետական Միությունում, հայտնաբերեց սպելտա ցորենը, ինչպես նաև վայրի ցորենի այլ տեսակներ[26]։

1927 թ. Երևանի խորհրդային առաջին տնտեսությանը կից հիմնվեցին այգեգործական փորձնական կայան, պտղաբուծական և միջատաբանական բաժիններ։ 1926—1927 թթ. պրոֆ. Գ. Գրձելյանը, Ա. Վերմիշյանի հետ միասին, կատարեց Հայաստանի այգեգործության ընդհանուր հետազոտությունը (հողժողկոմատի գծով), ապա նաև Հայաստանի այգիների հատուկ հետազոտությունը՝ խաղողի վազի ֆիլոքսերա հիվանդությամբ բռնված վայրերը երևան բերելու համար[27]։

Մինչև սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում չկային նաև գիտական հիմնարկներ առողջապահության բնագավառում։ Առողջապահու-

---

23 «ՀԱՄԿ(բ) Կենտկոմի 4-րդ պլենումի բանաձևերը», Երևան, 1929, էջ 18—19։

24 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր, 1926—27 և 1927—28 թ.», Երևան, 1929, էջ 70։

25 «Հոկտեմբեր-նոյեմբեր։ Տարեգիրք գրականության, արվեստի, գիտության և ժողովրդական տնտեսության», Երևան, 1932, էջ 415։

26 «Գիտությունը Հայաստանում 50 տարում», Երևան, 1973, էջ 857—858։

27 «Հոկտեմբեր-նոյեմբեր։ Տարեգիրք գրականության, արվեստի, գիտության և ժողովրդական տնտեսության», էջ 415—416։

թյան ժողկոմատի սիստեմում 1923 թ. սեպտեմբերին կազմակերպվեց տրոպիկական ինստիտուտը, որը Մոսկվայի տրոպիկական ինստիտուտից հետո երկրորդն էր Սովետական Միությունում։ Իր գոյության առաջին տարիներին ինստիտուտը գիտահետազոտական եռանդուն գործունեություն ծավալեց տրոպիկական մի շարք հիվանդությունների, հիմնականում մալարիայի դեմ պայքարելու ուղղությամբ, կազմակերպելով հակամալարիական կայանների լայն ցանց։ Եթե 1923 թ. գործում էր 1 կայան, ապա 1924 թ.՝ 5, իսկ 1925 թ.՝ 8 կայան[28]։ ՀՍՍՀ սովետների IV համագումարին (1925 թ. մարտ) տրված հաշվետվության մեջ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը նշել է. «Առողջապահության ասպարեզում... խոշոր հաջողություններ ենք ունեցել, մանավանդ մալարիայի դեմ պայքարելու գործում։ Այստեղ մենք այնպիսի հաջողությունների ենք հասել, որ կարող ենք օրինակելի համարվել Խորհրդային Միության սահմաններում։ Գավառներում մենք ունենք մի քանի տրոպիկ կայաններ, իսկ կենտրոնում՝ տրոպիկական ինստիտուտ, որոնց աշխատանքը կարելի է օրինակելի համարել ներկա պայմաններում, ինչպես այդ վկայում են համամիութենական մասշտաբով այդ ասպարեզում աշխատող մի շարք ղեկավար ընկերներ»[29]։ 1920-ական թվականների վերջերին տրոպիկական ինստիտուտն ուներ հետևյալ լաբորատորիաները՝ կլինիկական, նախակենդանաբանական, միջատաբանական, որդնաբանական, ախտաբանական-կազմախոտական[30]։ Ինստիտուտը տեսական աշխատանքները հաջողությամբ շաղկապում էր պրակտիկայի հետ՝ Հայաստանի տարբեր շրջաններում կազմակերպելով գիտական արշավախմբեր։

Տրոպիկական ինստիտուտն իր գործունեությամբ մեծապես նպաստեց առողջապահության ասպարեզում Հայաստանի կոմկուսի և կառավարության մշակած միջոցառումների իրականացմանը։ 1928 թ. հունվարի վերջին տեղի ունեցած Հայաստանի հակամալարիական II համագումարի բանաձևում ընդգծվում էր. «Համագումարն անհրաժեշտ է գտնում շեշտելու, որ բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիության հետ միասին՝ կոմկուսի ղեկավարությամբ երկիրն ազատել է քայքայումից, սովից ու հիվանդություններից և դուրս է բերել սոցիալիստական շինարարության լայն ճանապարհ։ Սոցիալիզմի ուղիներով հետագայում առաջ գնալ հնարավոր է տնտեսության վերակառուցման դեպքում, որի համար անհրաժեշտ է ամբողջ երկրի կուլտուրական վերելքը։

Մենք, բժիշկներս, որ աշխատում ենք կուլտուրական ֆրոնտի մի առաջաբեղում, պարտավորվում ենք առաջիկայում էլ մեր բոլոր ուժերով օգնել խորհրդային իշխանությանը՝ իր այդ խոշոր աշխատանքների միջոցին»[31]։

1920-ական թվականներին հանրապետության էլեկտրիֆիկացման և ոռոգման համար խիստ կարևոր նշանակություն են ստանում այն գիտահետազոտական արշավախմբերի աշխատանքները, որոնք կապված էին Սևանա լճի ջրային ռեսուրսների օգտագործման, ինչպես նաև Արաքսի ջրային հնարավորությունների հետազոտության հետ։ 1930 թ. աշնանն արդեն Սևանի ուսումնասիրության քառամյա աշխատանքների նախնական արդյունքները ցույց

28 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 4, գ. 32, թ. 38։

29 «Խորհրդային Հայաստան», 17. III. 1925։

30 Վ. Թ., Տրոպիկական ինստիտուտ («Լենինյան ուղի», 1928, № 5—6, էջ 126—127)։

31 «Խորհրդային Հայաստան», 1. II. 1928։

տվեցին, որ հնարավոր է լճի ջրի պաշարի մի մասը բաց թողնել՝ էներգետիկայի և ոռոգման նպատակների համար։ Նույն թվականին կազմակերպվեց ՀՍՍՀ ժողկոմխորհին կից Սևանի կոմիտեն, որը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և «Էներգոստրոյի» հետ միասին մշակեց Սևանի պրոբլեմի լուծման նախագիծը[32]։ 1928/29 և 1929/30 թթ. ոռոգման գծով կատարված գիտահետազոտական աշխատանքների վրա ծախսվեց ավելի քան 800 հազար ռուբլի, որից ավելի քան 600 հազարը՝ Սևանի և Արագածի պրոբլեմների ուսումնասիրության վրա[33]։

ՀՍՍՀ տնտեսական խորհրդակցության 1926 թ. հունիսի 16-ի նիստում որոշվեց ընտրել հանրապետական էլեկտրիֆիկացիոն հանձնաժողով՝ բաղկացած 7 հոգուց և «Անհրաժեշտ համարել հետագայում հանձնաժողովի կազմը լրացնել մասնագետներով ու գիտական գործիչներով»[34]։ Հայաստանի խոշոր հիդրոտեխնիկական կառույցների շինարարության գործում անգնահատելի վաստակ ունի տաղանդավոր ինժեներ և ժողովրդական տնտեսության անխոնջ կազմակերպիչ Հ. Տեր-Աստվածատրյանը։

Այսպիսով, Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարությամբ իրականացվող միջոցառումները նպաստավոր պայմաններ ստեղծեցին արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար։

1920-ական թվականների վերջերին Հայաստանում գիտահետազոտական աշխատանքները զարգանում էին արդյունաբերության հետ կապված այնպիսի գիտությունների բնագավառում, ինչպիսիք են քիմիան և երկրաբանությունը։ Պրոֆ. Ս. Ղամբարյանի ջանքերով ստեղծվեց հայ քիմիկոսների դպրոցը, որն անմիջականորեն զբաղվում էր հանրապետությունում քիմիական արդյունաբերություն ստեղծելու խնդիրներով[35]։ Ինժեներ-երկրաբաններ Հ. Կարապետյանի և Տ. Ջրբաշյանի ղեկավարությամբ ընդլայնվեցին երկրաբանական-հետախուզական աշխատանքները[36]։

Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, հատկապես նրա առաջին շրջանում, երբ կուսակցության ներսում ակտիվացել էին զանազան հակակուսակցական ուժերը, Համ(բ)Կ-ն խնդիր դրեց է՛լ ավելի ուժեղացնել մարքսիստական-լենինյան գաղափարախոսության պրոպագանդումը, բարձրացնել կադրերի գաղափարաքաղաքական մակարդակը։ Այս պատճառով էլ հսկայական նշանակություն էր տրվում գիտության տարբեր ճյուղերում մշակվող պրոբլեմների մարքսիստական վերլուծությանը։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. նոյեմբերյան պլենումը, քննարկելով գաղափարախոսական բնագավառի խնդիրները, ընդգծեց, որ սոցիալիստական շինարարության ծավալումը և դասակարգային հակասությունների սրումը հրա-

---

32 Մանրամասն տե՛ս «Տեխնիկան մասսաներին», 1932, № 5—6, էջ 7—10։

33 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր, 1928/29—1929/30», Երևան, 1931, էջ 55։

34 ՄԼՀ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 6, գ. 130, թ. 48 շրջ.։

35 Մանրամասն տե՛ս «Բնագիտության և տեխնիկայի պատմությունից» («Գիտական աշխատությունների ժողովածու», III, Երևան, 1964, էջ 269—282)։

36 Մանրամասն տե՛ս Լևոն Ավագյան, Երկրաբան Հովհաննես Կարապետյան, Երևան, 1975, «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», IV, Երևան, 1967, էջ 258—265։

մայարար պահանջում են ուժեղացնել տեսական աշխատանքը՝ գործնական բնույթի շատ հարցերի ճիշտ լուծման համար։ Պլենումն անհրաժեշտ գտավ «Ամեն կերպ խրախուսել գիտական ընկերությունների ստեղծումը, նպատակ ունենալով մշակել գիտության այլևայլ բնագավառների հարցերը։ Այդ տեսակետից անհրաժեշտ է հասունացած համարել մարքսիստ-պատմագետների, տնտեսագետների և մատերիալիստների գիտական ընկերություններ ստեղծելու հարցը։

Գիտական շահագրգռությունն աշխուժացնելու, անկուսակցական ինտելիգենցիային դեպի գիտական-հետազոտական աշխատանքը գրավելու համար անհրաժեշտ է պատշաճ բարձրության վրա գնել դասախոսային լայն աշխատանքը թե մարքսիզմի ընդհանուր մեթոդոլոգիայի հարցերի, թե մեր շինարարության առանձին պրոբլեմների շուրջը։

Դպրոցներում և բուհերում տնտեսական և ընդհանուր մեթոդոլոգիական գիտությունների դասավանդումը պետք է կենտրոնացնել կոմունիստների ձեռքը։

Անհրաժեշտ է լայն ծավալել մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրության գործը...»[37]։ Այնուհետև բանաձևում ընդգծվում էր, որ կուսակցությունը «...պետք է ճշտորեն ուրվագծի ամբողջ ճակատը, դասավորի կոմերիտմիության, արհմիությունների, կանանց և խորհրդային անկուսակցական ինտելիգենցիայի ուժերը և այսպիսով իրապես հանդես գա առաջնորդի, ղեկավարի դերում»[38]։ Պլենումից անմիջապես հետո՝ նոյեմբերի 23-ին, տեղի ունեցավ հանրապետության գաղափարախոսական բնագավառի աշխատողների խորհրդակցությունը[39], որը հրավիրել էր ՀԿ(բ)Կ Կենտկոմը։ Խորհրդակցությունն ամենայն սրությամբ դրեց Հայաստանում գիտատեսական աշխատանքի ուժեղացման հարցը, մասսաների մեջ մարքս-լենինյան գաղափարախոսության խորացման անհրաժեշտությունը[40]։

1920-ական թվականներին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը միաժամանակ մեծ աշխատանք կատարեց հին գիտական մտավորականության վերադաստիարակման, նրան սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու, ինչպես նաև գիտական նոր կադրերի պատրաստման ուղղությամբ։

Լայնորեն օգտագործվում էր Սովետական Ռուսաստանում գիտության կազմակերպման փորձը։ Հայաստանի գիտահետազոտական հիմնարկները սերտ կապեր են հաստատում միութենական հանրապետությունների գիտական շրջանների հետ։ 1925 թ. սեպտեմբերին, երբ նշվում էր ՍՍՀՄ ԳԱ 200-ամյակը, Լենինգրադ մեկնեց Երևանի համալսարանի և գիտության ու արվեստի ինստիտուտի պատվիրակությունը՝ անվանի գիտնականներ Հ. Հովհան-

---

37 «Հայաստանի կոմունիստ. (բ) կուս. խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում», Երևան, 1929, էջ 41—42։

38 Նույն տեղում, էջ 44։

39 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն, 1920—1980», Երևան, 1981, էջ 115։

40 Մանրամասն տե՛ս Դ. Դզնունի, Իդեոլոգիական խորհրդակցության արդյունքները, («Լենինյան ուղի», 1928, № 11, էջ 116—125)։

նիսյանի և Մ. Աբեղյանի գլխավորությամբ[41]։ Նույն տարվա նոյեմբերին գիտության և արվեստի ինստիտուտը նամակով դիմեց ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Ա. Կարպինսկուն՝ ցանկություն հայտնելով ակադեմիայի հետ հաստատել մշտական կապեր։ Պատասխան ուղերձում գիտությունների ակադեմիայի նախագահությունը ողջունում է ինստիտուտի հիմնադրումը ու նրան մաղթում հաջողություններ[42]։

Այսպիսով, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ հայ ժողովուրդը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջումից, այլև կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության իրականացման հետևանքով հնարավորություն ունեցավ զարգացնելու իր մշակութային հարուստ ժառանգությունը։ Սովետական իշխանության առաջին իսկ տարիներին կուլտուրական շինարարության ամենատարբեր բնագավառներում ձեռք բերվեցին զգալի նվաճումներ։ Միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նաև գիտության զարգացման համար։ Հայաստանի կոմկուսի զեկավարությամբ 1920-ական թվականներին ստեղծվեցին Սովետական Հայաստանի առաջին կրթական և գիտահետազոտական օջախները, դրվեցին գիտության հետագա վերելքի հիմքերը։

ДЕЯТЕЛЬНОСТЬ КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ АРМЕНИИ ПО ОРГАНИЗАЦИИ НАУКИ В РЕСПУБЛИКЕ (1920-е ГОДЫ)

СТЕПАН ГАРИБДЖАНЯН

Резюме

Благодаря победе Великой Октябрьской социалистической революции и установлению Советской власти в Армении перед армянским народом открылись широкие перспективы не только социально-экономического и политического развития, но и всестороннего духовного подъема. Социализм создал все необходимые условия для невиданного ранее культурного роста и полного раскрытия таланта одного из древнейших цивилизованных народов мира.

Большое значение в деле успешного решения задач культурной революции придавалось развитию науки. Уже с начала 1920-х годов под руководством Коммунистической партии Армении были созданы

---

41 «Խորհրդային Հայաստան», 26. VIII, 1925։ Հոկտեմբերի 18-ին Կուլտուրայի ասն մեծ գահլիճում, գիտության և արվեստի ինստիտուտը նշում է ՍՍՀՄ ԳԱ 200-ամյակը։ Հանդիսավոր նիստում ելույթներ են ունենում Լենինգրադ և Մոսկվա ուղարկված պատգամավորները («Խորհրդային Հայաստան», 18. X. 1925, 21. X. 1925)։

42 Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 236, թ. 79, գ. 257, թ. 78, К. С. Худавердян, Культурные связи Советской Армении. Краткий исторический очерк, Ереван, 1977, с. 38; В. Д. Есаков, Октябрь и становление советской науки в национальных районах («Великий Октябрь и национальный вопрос», Ереван, 1977, с. 256).

первые научные учреждения республики. Основанный в 1921 г. Ереванский государственный университет явился признанным научным центром Советской Армении. Наряду с университетом научная мысль развивалась в научно-исследовательских учреждениях, среди которых были Эчмиадзинский культурно-исторический институт (1921 г.), Тропический институт (1923 г.), Севанская озёрная станция (1923 г.), Бюро по истории партии (Истпарт) (1923 г.), Институт науки и искусства ССРА (1925 г.), а также лаборатории, опытные станции, музеи.

Во многих областях общественных и естественных наук успешно трудились видные представители научной интеллигенции Армении.

Коммунистическая партия придавала особое значение пропаганде марксистско-ленинской идеологии и укреплению методологических основ науки. В резолюции ноябрьского (1928 г.) пленума ЦК КП/б/Армении была подчеркнута необходимость с правильных методологических позиций анализировать теоретические и практические проблемы социалистического строительства, широкого привлечения коммунистов к научной работе.

В 1920-х годах был заложен надежный фундамент дальнейшего бурного развития науки последующих десятилетий.